



ԳԱԶՄԱՎԵՊ

ՈՅԻ. 1871 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՑՈՒԼԻՍ

ԳԱՂԱԲՈ. Ի 1871 — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԳԼՈՒԽ Գ.

Յեղափոխութեան յուրազադէմ յուզմունիք :

Գերմանացւոց բարիպէն քաշուելովը, առջի բերան ինչպէս ապշութիւն մը ակրեց ընդհանուր քաղաքին : Փոխորկի մը նմանեցաւ, որ յանկարծ անստոյգ ամպերով նշանը կու տայ . կամաց կամաց ամպերը կը կուտակին, կը զիզուին, կը պատեն . թեթև հով մը առջևուն աղդարար կը զրկեն . ապա ահեղասաստ որոտմունք, փայլակք, կայծականց շառաչմունք, հողմն ուժգին, բընութիւն ողջոյն 'ի խռով, ապականիշ կարկուտ, յորդ անձրեւ . և ապա յանկարծ տարերաց բուռն խիզախումը կը մեղմանայ . հեզիկ հեզիկ անդորրութիւն կը սկսի վերահաստատիլ, երկնից կապուտը ամպրոպայոյզ ամպոց մէջէն կը ծաթի, մութ սպառնալեաց ամպք կը հեռանան և անորոշ անդորրութիւն մը անմուռնչի մը պէս կը տիրէ : Բայց աչքը չորս դին դարձընողն, աւանդ, ամենայն ինչ յաւեր և յապականութիւն կը տեսնէ :

Այսպէս եղաւ նաև բրուսիացւոց մնացքն 'ի բարիպ . և ապա երբ անկէ մեկնեցան, կարծես թէ քաղաքը բուռն մրկէ մը ազատեր էր. անստոյգ վիճակի մը երեսյթը, ընդհանուր քաղքին վրայ տարածուեցաւ : Սակայն ոգիքը այնչափ կրած նեղութիւններէն այլայլեալ էին . և կարելի չէր որ անվրդով իրենց սովորական զբաղանաց դառնային : Միայն առիթը կը մնար որ իրենց այլայլեալ ոգւոց բանութեանը արձակուրդ տար . և առիթը չուշացաւ :

Գաւառք տժգոհք շարունակ յեղափոխութեանց խառնակութիւններուն տանելու, յեղափոխութիւնք որոնց բոյնը միշտ 'ի բարիպ էր, սկսան յուզիլ, ժողովին առաջարկելու խնդրոյ մը ստորագրութիւն ժողովնել, որուն զօրութեամբը բարիպ ալ գաղղիոյ մայրաքաղաք ըլլալու չէր : Ժողովը որ գեռ ևս 'ի Պոռտոյ կը նստէր, հաւան էր նոյն առաջարկութեանը . միայն խնդիրը կը

մնար քաղաքն որոշել, ուր ազգային երեսփոխանք իրենց գումարմանց նիստերը կարենան կատարել: Յետ բազում վիճանց վերջապէս վէռուայլ որոշուեցաւ, և անմիջապէս ժողովին ախտորհն գոն փոխադրուեցաւ:

Այս բանս յայտ է թէ մեծ գրգիռ ազգելու էր Բարիզեցւոց, տեսնալով որ ժողովն իսկ գաւառաց առաջարկը ընդունած ըլլալով, այնու որոշմամբ իրենց գերակայութե պսակը կը կորսընցընէին: Յաւել և զայն որ ժողովոյն նախագահին ինչպէս նաև նուիրակաց շատին, հասարակապետական սկզբանցը վրայ կը տարակուելու: Որով մէկ կողմանէ իրենց անձնասիրութեան վէրքը, միւս կողմանէ իրենց հասարակապետական վարչութիւնը կորսնցնելու վրտանգը, թող ուրիշ ազատութեան իրաւանց պահանջը, վերջի աստիճանի գրգռութեան հասուցած էին ոգիքը: Բաց ասկէ նաև վարչութիւնն իսկ տկար և անդօր էր անկարգութեանց դէմի առնելու: Այսպէս զրդուեալ ժողովուրդը վարանմանց մէջ կը յուզէր և գաղտնի անձանօթ անձինք, իրենց դիտաւորութիւններն ունենալով, կը ջանային ամենայն միջոցներով այն ժողովրդեան գրգռութիւնը տածելով սաստկացնել, և ամենուն ոգիքը ապստամբութեան մլել:

Ժողովուրդը յուզեալ այլեայլ առիթներով զայրացած, յանկարծ հրաման եղաւ Լըքոնդ զօրավարին որ երթայ Մոնմառողութիւններն ունենալով, կը ջանային ամենայն միջոցներով այն ժողովրդեան գրգռութիւնը տածելով սաստկացնել, և ամենուն ոգիքը ապստամբութեան մլել:

Այս յեղափոխութեանս մէջ Մոնմառողութը, վիլլէդ և Պէլվիլ թաղերն եղան խռովարարաց բոյն: Մոնմառողութ ազգային պահանորդք վրէժինդիր ազգասէր ողի մը երևցնելով, շատ մը թնդանօթից վրայ ձեռք դրին. և պատճառանօք՝ որ չըլլայ թէ Բրուսիացւոց ձեռքն իյնան, իրենց թաղին բարձունքը քաշեցին տարին, և հոն դիշեր ցորեկ սկսան պահպանութիւն ընել:

Վարչութիւնը շատ փորձ ըրաւ համոզողական միջոցներով թնդանօթները ձեռքերնէն առնելու. այլ անկարելի ե-

ղաւ: Գաղտնի դաւաճանաց ժողով մը, իրը ազգային պահանորդաց բանակին ներկայացուցիչք, զթազականս ամենայն տեսակ խոստմունքներով կը խրախուսէին վարչութեան ձայնին անունընդիր ըլլալու: Եւ որովհետեւ Բարիզերմանացիներէն պաշարուած ժամանակէ իւրաքանչիւր պահանորդ վարչութենէն երեսուն սուփ գրամական նըպասար կ'ընդունէր, իրը փոխարէն արհետից անգործութեամբ հրատարակեր էր, որ պատերազմին դազրելով այն նըպասան ալ պիտոր դազրէր: Այս գէպքը զաւաճանք իրենց դիտաւորութեանցը օգտեցնելով, ևս առաւել ոգիքը կը զայրացնէին, յորդորելով որ այն զրամական նպաստը անորոշ ժամանակի շարունակութեամբ պահանջնեն:

Ոգիքը այսպէս այլեայլ առիթներով զայրացած, յանկարծ հրաման եղաւ Լըքոնդ զօրավարին որ երթայ Մոնմառողութիւնները զրաւէ: Անմիջապէս զօրավարը ռազմիկ զօրաց 88դ վաշտուն մասամբ մը, մարտի 18ին, առաւտեան ժամը չորսին, ճամբայ ելաւ գէպք ՚ի Մոնմառողութը: — « Պատուհանէս, կ'ըսէ ականատես մը, մութ մառախղին մէջէն, այդ զօրաց անցը տեսայ: Երանը ծանր կը քալէին իրենց մոխրագոյն վերարկուաց մէջ պլուած: ոմանք տանց պատերուն քովէն կը քերէին: Թեթև բարակ անձրև մը շարունակ կ'իյնար: Շտապաւ վար ինչայ և անոնցմէ մէկի մը հարցուցի. »

— Ուր կ'երթապք:

— Զենք գիտեր, պատասխանեց այն մէկը:

— Կ'երեսայ թէ Մոնմառողութ կ'երթանք, ըստու ուրիշ մը:

Եւ յիրաւի ՚ի Մոնմառողութ կ'երթային, որ պղտի բլին տափարակը և անոր մերձակայ փողոցները բանեն, և թնդանօթները ձեռք բերեն...: Եւ յաջողեցան յիրաւի ՚ի սկզբան նոյն թնդանօթից տիրելու. այլ ապա խռովարք փութացին ու նորէն զօրաց ձեռքէն առին. կամ թէ լաւ ևս ըսելու համար

զօրքը թողուց որ առնուն : Այս դէպ-քիս մէջ կը զուրցուի թէ լըքոնդ զօ-րավարը խոռվարարներէն գերի բըռ-նուեցաւ ու Շադօ Ոռուժ տարուեցաւ : Ի Բլաս Բիկալ, ժամը իննին, Ափրի-կեան որսորդաց հատուած մը, ազգա-յին պահանորդաց հանդէպ գտնուե-լով, հրամանատարաց պատուիրելովը սաստիկ կրակ կը սկսի ընել . ազգային պահանորդք անոնց կրակին կը պատաս-խանեն : Որսորդաց սպայ մը յառաջ կը մատչի . անմիջապէս գնտակէ մը զար-նուելով վար կ'ինայ : Իր զօրքելը մէ-կէն կը փախչին, շատը գինի վաճառո-ղաց խանութները, ուր իրենց գինի տուող խոռվարարաց հետ կ'եղբայրա-կցին : Ինծի ապահով կերպով զուրցուե-ցաւ նաև թէ վինուա զօրավարը ձի հեծած նոյն այն ատենը Բիկալ հրա-պարակին մօս էր : Կանայք շուտ մը ա-նոր չորս կողմը պատեցին և սկսան ա-զաղակներով նախատել զինքը : Տղուն-մէկը վրան քար մը նետեց, ուրիշ տղայ մը գլխարկը զօրավարին գլխուն նետեց : Ասոր վրայ զօրավարը ձին սաստիկ մը-տրակելով, աներեսոյթ եղաւ : Այնու-հետեւ ռազմիկք և ազգային պահա-նորդք թևէ թև անցած սկսան ՚ի Մոն-մառդոը և գրափ պուլվառները պարտիլ, և անկէ ալ անդին բոլոր բարիգու մէջ ցրուիլ : Քիչ մը յառաջ այսպիսի խումբ մը տեսայ որ բաւականապէս գինիով զուարթացած էին : Այս ամեն բանի վերջը ինչ պիտոր ըլլայ . ոչ ոք դիտէ » :

Եւ ըլլալիքն արդարն խոռվարար ա-պստամբութիւնն էր . և խոռվութիւնը սպանութեամբք սկսելու էր :

« Նոյն մարտի 18ին օրը, կ'ըսէ ակա-նատեսը, որուն խօսքերը ստէպ մէջ պիտոր բերեմ, միջօրէէն ետքը ժամը երեքին, խուռն բազմութիւն մը կար — զօրաց, պահանորդաց, կանանց ու տը-ղայոց, կլիզէ-Մոնմառդոը մերձակայ փողոցներէն մէկի մը մէջ : Այն անձն որ ինծի այս բանս պատմեց, փողոցին անունը չէր յիշեր : Տաքութեամբ կ'ա-տենաբանէին, մեծ մեծ ձևեր ընելով : Գլխաւորաբար լըքոնդ զօրավարին վր-

րայ խօսք կ'ըլլուէր, որ ամբաստանեալ էր իբր թէ երկք անգամ իր զօրացը հրաման տուած ըլլար քաղաքացի զօ-րաց վրայ կրակ ընելու :

— Շատ աղէկ ըրեր է, ըսաւ ծերու-նի մը որ հոն տեղուանք կեցած մտիկ կ'ընէր :

Այս խօսքիս վրայ նախատանաց խօս-քերու և հայհոյութեանց փոթորիկ մը փրթաւ :

— Իր զլխաւորներէն պատուէրը ընդ-ունած էր թնդանօթները գրաւելու և ամբոխները ցրուելու, ըսաւ դարձեալ ծերունին հանդարտութեամբ . հարկ էր որ հնազանդէր :

Ունալու ձայները կրկնապատկեցան : Կնիկ մը, մառանապետուհի, մօտեցաւ այն մարդուն որ այսպէս ամբոխին կա-տաղութեանը զոհ ըլլալու ինքզինքը վտանգի մէջ կը զնէր, քթէն ՚ի վեր ա-նոր նայեցաւ և ըսաւ :

— Գլէման թոման է :

Եւ յիրաւի Գլէման թոմա զօրավարն էր . այլ աստիճանին վերաբերեալ զի-նուորական զգեստը չէր հագած : Մէ-կէն հարիւրաւոր բերաններէ ամենէն բիրտ նախատինքներն իրեն դէմ զուր-ցուեցան, և անտարակոյս այն ամբոխը միայն խօսքերով չէր բաւականանար, եթէ մէկ մը կանչած չըլլար .

— Ահ, դու ուրեմն այն ոճրագործ լըքոնդը կը պաշտպանես . շատ աղէկ, զքեզ ալ անոր հետ զնենք պիտի : Ա-տիկայ շատ գեղեցիկ զոյդ մը ... պիտոր ըլլայ :

Այդ առաջարկը ընդունելի եղաւ, և Գլէման թոմա զօրավարը, շատ մը նա-խատինք կրելով, ՚ի Շադօ Ոռուժ տա-րուեցաւ, ուր առաւօտուընէ ՚ի վեր լը-քոնդ զօրավարը բանտարկուած կը պա-հուէր :

Ժամը չորսին ատենները հարիւրի շափ պահանորդք երկու զօրավարներն իրենց արգելանոցէն հանեցին : Լըքոնդ զօրավարին ձեռքերը կապած էր, այլ Գլէման թոման առանց կապի էր : Ար-գելանոցէն առնելով զանոնք Մոնմառ-դոի բլրին գլուխը տարին, և Ռոզիէ

փաղոցին 6 թուանշանին առջելը դադարեցան։ Պղտի տուն մըն է, զոր ապա տեսնելու գնացի։ առջելը պարտէղ մը կայ։ և ինքը տունը՝ գեղջկական պարզ երեղիթ մ'ունի։ ինչ որ այն տանը մէջ զիպաւ, թերևս երբեք կարելի շըլլայ իմանալ։ Արդեզք հոն տեղ էր որ ազգային պահանորդաց Յանձնաժողովը կը նստէր այն ատեն։ Ամբողջ Յանձնաժողովը հոն տեղ ներկայ էր, թէ միայն անոր մէկ քանի անդամք էին որ զինքը կը ներկայացնէին։ Շատ մարդիկ կը համարին թէ տունը զինուորականք բռնած չէին, և թէ պահանորդք զիտմամբ հոն տեղ մնուցեր էին զերիները, որպէս զի ժողովրդեան կարծել տան թէ զատաստան ընելու միտք ունէին, և անով իրենց նախատեսած սպանութեանը օրինաւորութեան երևոյթ մը տան։

Այս ալ ըսելու ենք, որ ըստ վկայելց բաղմաց, պահանորդաց հետ շատ մը ուազմիկ զօրք ալ կային իբր դահիճ երկու զօրավարաց։

Դատը — ենթադրելով որ դատ մը ըրած ըլլան — շատ երկայն չքշեց։

Փողոցին մէկ ծայրը ցանկապատ որմ մը կայ. հոն տեղ տարուեցան երկու դատապարտեալք։

Կանկ առածնուն պէս, աղդային պահանորդաց սպայ մը բուռն կերպով դէման թոմայ զօրավարին զգեստին օձիքէն բռնեց, շատ անդամ ամուր ցընցեց զինքը, և վերջապէս որվոլվէու մը անոր կոկորդին վրայ կոթնցուց։

— Խոստովանէ, ըստ անոր, որ դու շասարակապետութիւնը մատնեցիր։

Գլէման թոմա առանց պատասխան տալու ուսըթօթուեց։ Այն տտեն սպան մէկ զի քաշուեցաւ։

Զօրավարը մինակ պատին առջել կանգուն կեցած էր։

Ո՞վ կրակ ընելու հրաման տուաւ. չգիտցուիր։ Քաանի չափ հրացանից բոմբիւնը լսուեցաւ. Գլէման թոմա զօրավարը ամբողջ մարմնովը պատյա մը առաւ, և երեսն ՚ի վար գետինը ինկաւ։

— կարգը քեզի. ըստ հանդիսաւեսներէն մէկը լքքոնդ զօրավարին։

Զօրավարը շուտ մը ինքն իրեն այն մարդասպանաց մէջէն զուրս ցատկեց. անցաւ զլէման թոմայի զիակին վրայէն, կոթնեցաւ պատին ու սպասեց։

— Հնոր. կանչեց սպայ մը։

Երկրորդ զիակ մը յաւելաւ առջինին վրայ։

Երկու ժամ յառաջ Ագասիա փողոցը պառաւ կնկան մը հանդիպեցայ, որ զնտակ մը Յ ֆրանզի կը վաճառէր, զոր Ռողիկ փողոցին ծայրը պատին ծեփին մէջէն հաներ էր։

Մհա այսպիսի զղուելի եղեռնագործութեամբ սկսուեցաւ մարտի 48ին յեղափոխութիւնը, որ վերջապէս քաղաքական պատերազմին դառնութիւններովը պիտոր լմննար։

Բարիկու թաղապետք նախատեսած ըլլալով այդ քաղաքական պատերազմը, ամենայն միջոցներով աշխատեցան անոր գէմն առնուլ. և երկու կողմանց մէջ մտնելով ջանացին հաշտութեան միջոց գտնել։ Վարչութիւնը պարագայից ծանրութեանը տեղիք տալով, զինաւ խոսվարաց մէկ քանի պահանջմանց. և այն ինչ հաշտութիւնը ըլլալու վրայ էր, երբ լքքոնդ և զլէման թոմա զօրավարաց սպանութիւնը վարչութեան անձանց ականջը հասաւ։

Այնուհետեւ վարչութիւնը դառնացաւ. տեսաւ որ գիմնայը նենդաւոր մարդասպանաց ժողով մ'ունէր. յանձն շառաւ անոնց հետ գաշնադիր ըլլալու։ Ուստի լոելեայն բարիկ քաղաքը երբաղդին թողով, ելաւ վէսուայլ քաշուեցաւ, որ իրաց ելքը մտածէ։

Այսպէս խոսվարալը առջենին արձակ գտնելով, ելան բոլոր քաղաքը տարածուեցան և տիրացան անխափան ամենայնի։ Խրոխտ սպառնալիքներով սկսան զամենքը վախցընել, չթողլով որ իրենց չար զիտմանցը դէմ՝ բարեկարգութեան հետամուտք կուսակցութիւն ձեացնեն։